ԳԼՈՒԽ ՄԼԴ.

Տունն հայոց շինեսցի մէջ ամուր աշխարհի և մայրաքաղաքի որում գացի պալատն նախարարին և պարսպեալ հովանաւորութեամբ պահակօք և 'ի միջի նորայ խորան մի մեծ արեւելից առ արևմուտս 'ի կողմն արևելեան երկու աստիճանաւ, և 'ի վերայ առաջի աստիճանի միմիայն աթոռ մի նախարարին և աջ կոյս նորայ 'ի վերայ երկրորդ աստիճանի Եպիսկոպոս տանուտէրն, 'ի նմանէ վայր ըստ երրորդ, չորրորդ և այլն մինչև կէս տանուտէրք հայոց ըստ իւրաքանչիւր աթոռի, նումր մնէն մինչ 'ի վայր, և 'ի ձախուստ կողմանէ 'ի վերայ երկրորդ աստիճանի, այլ կէս տանուտէրքն 'ի ձախակողմն նախարարին մինչև 'ի վայր, ամենեքեան ունիցին աթոռս մինչ վայր, և համար տանուտերաց որում ամենեքեան ծանիցեն այրն որում աշխարհի փոխանորդէ և որում աթոռի բազմենայ և որ համար աթոռ տեղի իւր։

Նախ նօմրայ 1	Նախարարն բազմող միայնակ 'ի վերայ աթոռի առաջի աստիճանի, և 'ի յանդիման աթոռի նորայ սեղան մի, և 'ի վերայ սեղանոյ թագ մի և սուսեր մի յառաջի նախարարին։